ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 43. Դիվանագետի հիմնական պարտականությունները

Դիվանագետի հիմնական պարտականություններն են՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.

բ) մասնագիտական և այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

գ) օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ և ժամանակին կատարելը.

դ) ղեկավար անձանց՝ իրենց լիազորությունների շրջանակներում և սահմանված կարգով տրված հանձնարարականներն ու ընդունած որոշումները կատարելը.

ե) մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովելը.

զ) արտաքին գործերի նախարարության հաստատած՝ աշխատանքային կարգապահության կանոնների պահպանումը.

է) իր լիազորությունների շրջանակներում հանրագրեր, դիմումներ և բողոքներ քննության առնելն ու օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալը

ը) պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ օրենքով նախատեսված ժամկետի ընթացքում.

թ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դիվանագետի էթիկայի կանոնները պահպանելը.

ժ) իր եկամուտների հայտարարագիրը ներկայացնելը՝ օրենքով սահմանված կարգով:

Դիվանագետն ունի նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

Deleted: է) իր լիազորությունների շրջանակներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելն ուօրենսդրությամբսահմանվածկարգովդրանցընթացքտալը.¶